«Աուտիզմ Ազգային Հիմնադրամ» 2017
ԳՅՈՒՂՅԱՆ 13, ԵՐԵՎԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ
+37411 21 30 11
icdc.child@gmail.com
www.anf.am

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աուտիզմը զարգացման բարդ նյարդաբանական խանգարում է, որը հիմնականում ի հայտ է գալիս երեխայի կյանքի առաջին երեք տարիների ընթացքում և ազդում է ուղեղի նորմալ աշխատանքի վրա:

Այսօր աշխարհում **68 երեխաներից 1-ը** ախտորոշվում է աուտիզմ համախտանիշով:

Աշխարհում ամեն **20 րոպեում** տեղի է ունենում աուտիզմի նոր ախտորոշում:

Աուտիզմի համախտանիշը ավելի հաճախ է հանդիպում, քան շաքարային դիաբետը, ՋԻԱՀ-ը, քաղցկեղը, Դաունի համախտանիշը, խլությունը և համրությունը միասին վերցրած:

Աուտիզմը չի ճանաչում աշխարհագրական կամ էթնիկական սահմանափակումներ:

Մինչ այսօր աուտիզմի **առաջացման հնարավոր պատճառները** դեռ հստակ հայտնի չեն: Դիտարկվում են, սակայն չեն ապացուցվում հետևյալ վարկածները՝ գենետիկական մուտացիաներ, արտաքին միջավայրի գործոններ, ժամանակակից կյանքի տեմպ և տեղեկատվական գերհագեցվածության յուրացման դժվարություն:

Վաղ տարիքում աուտիզմով երեխաների **ախտորոշումն ու միջամտությունը** համեմատաբար ավելի մեծ արդյունքներ են տալիս՝ բացահայտելով անհատի հնարավորինս բարձր պոտենցիալը՝ նրանց ընձեռնելով շրջակա աշխարհին հարմարվելու և հասարակության լիարժեք անդամ դառնալու հնարավորություն:

Կայուն և դրական արդյունք ապահովելու միակ վստահելի մոտեցումը վարքային, զարգացնող, ինտենսիվ շտկողական թերապիան է, որը իրենից ներկայացնում է շարունակական, յուրաքանչյուրի առանձնահատկություններին համապատասխանեցված հատուկ դասընթացներ, որոնք ուղղված են մի շարք հմտությունների զարգացմանը. տարրական ինքնասպասարկման կարողություններից մինչև գիտելիքի յուրացմանը, կրթության և մասնավորապես մասնագիտական արհեստների ձեռք բերմանը:

Աուտիզմի առաջացման պատճառները

Մինչ այսօր աուտիզմի առաջացման հնարավոր պատճառները դեռ հստակ հայտնի չեն: Դիտարկվում են, սակայն չեն ապացուցվում հետևյալ վարկածները

- խնդիրներ հղիության,
- ծննդաբերության ժամանակ,
- գենետիկական մուտացիաներ,
- արտաքին միջավայրի գործոններ,
- ժամանակակից կյանքի տեմպ
- տեղեկատվական գերհագեցվածության յուրացման դժվարություն

Աուտիզմի տարածվածությունը ամբողջ աշխարհում

(Nature Reviews Drug Discovery 11, 745-746 October 2012)



Հիմնադրամի Առաքելությունը

«Աուտիզմ ազգային հիմնադրամի» առաքելությունն է Հայաստանում ստեղծել լավագույն ուսումնական պայմաններ և ապահովել աուտիզմ ունեցող երեխաներին, պատանիներին և մեծահասակներին նորագույն արդյունավետ թերապեվտիկ ծառայություններով: Օգնել նրանց և նրանց ընտանիքներին արդյունավետորեն դիմակայել կյանքի դժվարին պայմաններին և ինտեգրվել հասարակությանը:

«Աուտիզմ ազգային հիմնադրամի» ծրագրի նպատակն է աուտիզմ և զարգացման այլ խանգարումներ ունեցող երեխաների բուժման, կրթության և զբաղվածության ապահովումը: Հիմնական մեթոդը, որը կիրառվում է, Կիրառական վարքային վերլուծությունն է (ԿՎՎ/ ABA), որը հնարավորություն է տալիս մշակել համապատասխան ծրագրեր՝ հիմնվելով երեխայի վարքի, մտավոր ունակությունների և հմտությունների մանրակրկիտ հետազոտման վրա: Բոլոր վերոնշյալ ակնկալվող արդյունքները գնահատվում են ԿՎՎ-ում առկա գնահատման համապատասխան չափորոշիչներով:

Տարվա ընթացքում իրականացվող ծրագրերը

2017 թվականին ծրագրում ընդգրկված երեխաներին կենտրոնը մատուցում է հետևյալ ծառայությունները՝

- ԿՎՎ-ծառայություններ (Վարքային թերապիա)
- Խոսքային թերապիա
- Օկուպացիոն թերապիա (Էրգոթերապիա)
- Արտթերապիա
- Երաժշտական թերապիա
- Ադապտիվ ֆիզ. դաստիարակություն (ԱՖԴ) (նոր համալրված երկու սպորտային դահլիճներում)
- Սոցիալական ծրագրեր
- Տնային ծառայություններ
- Ծնողների և մասնագետների մասնագիտական վերապատրաստումներ
- «Ամենօրյա կյանքի հմտություններ» և «Սոցիալականացում» ծրագրեր
- Պարային թերապիա
- Հոգեբանական աջակցություն
- Զբաղվածության ծրագրեր (կավագործություն, կար և գորգագործություն, այգեգործություն)

Կիրառական Վարքային Վերլուծություն (ABA)

ԿՎՎ-ն (ABA) աուտիզմ համախտանիշ և զարգացման ընդհանուր խանգարում ունեցող երեխաների ուսուցման մեթոդ է: Այն հիմնված է համապատասխան վարքը՝ ներառյալ խոսքը, ակադեմիկան և կենսական հմտությունները ուսուցանելու վրա՝ օգտագործելով գիտական սկզբունքները:

ԿՎՎ (ABA) թերապիայի ամենից տարածված մեթոդներից է DTT-ն: Յուրաքանչյուր հմտություն բաժանվում է ամենափոքր մասերի և անհատապես սովորեցվում է: Երեխան սկսում է փոքր հմտությունների յուրացումից և աստիճանաբար սկսում է սովորել ավելի բարդ հմտություններ, քանի որ յուրաքանչյուր նախորդ փոքրիկ հմտությունը հաջորդի հիմքն է:
Կենտրոնի բոլոր սաները ստանում են ինտենսիվ թերապիա «Կիրառական վարքային վերլուծություն» ծրագրի շրջանակներում: Յուրաքանչյուր երեխա ունի իր անհատական ծրագիրը, որը կազմվում է երեխայի դիտարկումից և գնահատումից հետո՝ հիմնվելով գնահատման արդյունքների վրա:
Կենտրոնի սաները գնահատվում են VB-mapp-ով, որը իրականացվում է ԱՄՆ-ում վերապատրաստված և համապատասխան հավաստագիր ունեցող կրթական ծրագրերի ղեկավարների կողմից:

Խոսքային թերապիա

Աուտիզմ ախտորոշում ունեցող անձինք ունեն տարաբնույթ խոսքային խանգարումներ: Կենտրոնում խոսքային թերապիան իրականացվում է երեխայի վաղ տարիքից, որով պայմանավորված է աշխատանքի առավել արդյունավետությունը: Կենտրոնում իրականացվող խոսքային թերապիան ուղղված է երեխաների հաղորդակցման հմտությունների զարգացմանը և իր մեջ ներառում է՝

- խոսքի ըմբռնում/ընկալում,
- հնչյունի արտաբերում,
- արտահայտչականություն,
- խոսքի սոցիալական կիրառում,
- ոչ խոսքային հաղորդակցություն (ժեստային հաղորդակցություն, PECS և PODD համակարգ):

«Պրագմատիկ կազմակերպչական դինամիկ ցուցադրումը» (PODD) Հայաստանում կիրառվում է միայն մեր կենտրոնում: Այն ներմուծվել է Ն. Վարդանյանի և Մ. Ենգոյանի կողմից մեկ ամիս ինտենսիվ ԱՄՆ-յում վերապատրաստումից վերադառնալուց հետո, թարգմանվել և տեղայնացվել է մեր կենտրոնի սաների համար: PODD գրքերը ստեղծվել են հաղորդակցական բարդ խնդիրներ ունեցող երեխաների համար: Այն հաղորդակցումը զարգացնող այլընտրանքային գիրք է:

Երեխաներին, ովքեր չունեն բանավոր խոսք, հաճախ տրվում են ուղղակի հարցեր, ճիշտ կամ սխալ պատասխաններով, կամ տրվում է սահմանափակ ընտրություններ: PODD-ը ստեղծում է հնարավորություն նախաձեռնել / իրականացնել զրույց, և ոչ միայն ստանալ արձագանք:

Կենտրոնի գրեթե բոլոր սաները, ովքեր չունեն բանավոր խոսք, ինտենսիվորեն սովորում են խոսել, շփվել և հաղորդակցվել այս համակարգով: Կենտրոնի սաներից 30% այս տարվա սկզբից սկսել են սովորել PODD համակարգով հաղորդակցվել, նրանցից 10 %-ը կարողանում են ինքնուրույն կազմել 3, 4 բառից բաղկացած սիմվոլներով նախադասություններ: 20%-ը հասկացել են համակարգի միջոցով շփվելու ձևը, բայց դեռ օգնության կարիք ունեն:

PODD-ն չի նախատեսված փոխարինել, այլ ավելի շուտ կարող է օգտագործվել այլ գործիքների հետ միասին:

PODD-ը միշտ ապահովում է բառապաշար հաղորդակցման և մի շարք հաղորդագրությունների և թեմաների համար տարբեր միջավայրերում:

Արտթերապիա

Արվեստի թերապիայի նպատակն է օգնել աուտիզմով մարդկանց սոցիալապես զարգանալ: Արտթերապիան օգնում է նվազեցնել երեխայի անհանգստությունը և թույլ տալ նրան շփվել հասարակության հետ ու ինքնաարտահայտվել:

Կենտրոն հաճախող բոլոր սաները ըստ իրենց անհատական ծրագրի շաբաթական առնվազն 2 օր ստանում են արտթերապիա:

Կենտրոնում իրականացվող արտթերապիայի հիմնական նպատակներն են՝

- Զարգացնել ինքնակառավարման և ուշադրությունը կենտրոնացնելու ընդունակություններ, զարգացնել երևակայությունը, տարածական ընկալումը, Ստեղծագործական գործունեությունը աուտիզմ ախտորոշում ունեցող երեխայի մոտ հարստացնում է սոցիալական միջավայրի հետ փոխազդեցության փորձը:

2017 թվականի առաջին երկու եռամսյակների ընթացքում մասնագետները դիտարկել են նոր սաներին և համապատասխան աշխատանք են սկսել իրականացնել՝ հիմնվելով նրանց առանձնահատկությունների և դիտարկման արդյունքների վրա, իսկ արդեն ծրագրում ընդգրկված սաների հետ աշխատանքը շարունակվում է ըստ իրենց անհատական ծրագրի: Կենտրոնի բոլոր սաները մասնակցում են արտթերապիայի պարապմունքներին:

Օկուպացիոն թերապիա

Օկուպացիոն թերապիայի հիմնական նպատակն է սովորոցնել երեխաներին ինքնուրույն կենցաղավարության, հնարավորինս ինքնուրույն ներգրավվելու այնպիսի գործողությունների մեջ, որոնք կարևոր են տվյալ երեխայի համար և իմաստ են հաղորդում նրա կյանքին:

2017 թվականին կենտրոնի բոլոր սաները ըստ իրենց անհատական ծրագրի և տարիքի ստացել են էրգոթերապիա:
Այն իր մեջ ներառել է՝

1. Զգայական ինտեգրում
2. Զբաղվածություններ

Կենցաղային հմտությունների ձեռքբերում

- Ինքնախնամք
- Գնումներ խանութից
- Ուտեստների պատրաստում

Ժամանց

- Պար
- Ռիթմիկա

Աշխատանքային հմտությունների ձեռքբերում

- Ձեռքի աշխատանք

3. Ադապտիվ ֆիզիկական կուլտուրա և ՕԹ

Երաժշտական թերապիա

Կենտրոնում յուրաքանչյուր սան ստանում է երաժշտաթերապիա, թե՛ անհատական, թե՛ խմբակային: Երկու դեպքում էլ զարգանում են միջանձնային հարաբերությունները: Երաժշտաթերապիան արդյունավետ է յուրաքանչյուր տարիքում:

Կենտրոնում 2017 թվականի երաժշտաթերապիայի նպատակադրումներից է երաժշտության միջոցով՝

- Խթանել շարժողական գործողությունները
- Զարգացնել զգայական գործողություններն ու հնարավորությունները
- Խթանել խոսքի զարգացումը

Կարգավորել խոսքի տեմպը, ռիթմը, շեշտադրությունը, տեմբրը, արտահայտչականությունը:
Կենտրոնի սաները երաժշտության միջոցով առավել հեշտ սկսել են սովորել տառերը, թվերն ու գույները, ճանաչել սեփական անձը, ծանոթացել են սեփական մարմնի մասերի և դրանց ֆունկցիաների հետ, ծանոթացել կենդանիներին ու նրանց արձակած ձայներին և այլն:

Հասարակության մեջ աուտիզմով երեխաների ինտեգրման և սոցիալականացման ծրագիր

Ծրագրի նպատակներն են՝

- երեխաներին ներգրավել հասարակական կյանքում՝ հաշվի առնելով նրանց անհատական առանձնահատկություններն ու նախասիրությունները,
- օգնել երեխաներին ստեղծելու իրենց սոցիալական հարաբերությունների համակարգը,
- ինտեգրել երեխաներին հասարակական կյանքի տարբեր ոլորտներում,
- զարգացնել երեխաների մոտ նոր կարողություններ ու հմտություններ, որոնք և կօգնեն նրանց ընդգրկվել ընդհանուր գործունեության մեջ (mainstreaming),
- սովորեցնել երեխաներին որքան հնարավոր է ինքնուրույն ապրել և գործել հասարակության մեջ և ի վերջո դառնալ հասարակության լիիրավ անդամ՝ օգտվելով բոլոր իրավունքներից ու հնարավորություններից:

2017 թվականին կենտրոնի բոլոր սաները ներգրավվել են սոցիալականացման տարբեր ծրագրերի մեջ:

2016 թվականից սկսած մինչ այժմ շարունակվում է համագործակցությունը Creative Educational Technologies (CET) կազմակերպության հետ:

CET կազմակերպությունը հրաշալի հնարավորություն է ընձեռել կենտրոնի 6-12 տարեկան երեխաներին անվճար մասնակցել իրենց կողմից կազմակերպված դասընթացներին: 2017թ.-ի մայիսի 17-ին ծրագրում ընդգրկված առաջին խմբի սաները ստացան իրենց առաջին վկայականները: Նույն օրը մեկնարկեց երկրորդ խմբի դասընթացները:

2017 թվականի մայիսի 31-ից Երևան քաղաքի թանգարանների և կենտրոնի միջև մեկնարկեցին նոր համատեղ ծրագիր՝ «Թանգարանային օր» անվամբ:

Ծրագիրը մշակվել է օգնելու աուտիզմ ունեցող երեխաներին ձեռք բերել սոցիալ փոխհարաբերություններ և հաղորդակցման հմտություններ, ինչպես նաև արտահայտել իրենց ներաշխարհը մշակույթի միջոցով:

Արամ Խաչատրյանի տուն-թանգարան « Երաժշտություն և գույներ» կրթական ծրագիր: «Ինտեգրում թանգարանների միջոցով » նախագիծ:

Երկրաբանական թանգարան «Ամեն ինչ փղերի մասին»

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

2008թ. կենտրոնը իր ներառական կրթական ծրագրի մոդելը ներդրել է Մորգենթաուի անվան №126 հիմնական ներառական դպրոցում: Այս ծրագիրը ուղղված էր աջակցելու աուտիզմ ունեցող երեխաներին ներառական կրթության ծրագրի շրջանակներում և հատուկ կրթական հաստատություններից նրանց տեղափոխել դեպի հիմնական դպրոցներ:

Ներառման այս մոդելը ենթադրում է դպրոցում յուրաքանչյուր երեխայի համար մշատական և շարունակական տվյալների հավաքագրում և արդյունքների ամփոփում (յուրաքանչյուր շաբաթ), ինչը հնարավորություն է տալիս մեզ արձանագրել ամեն մի երեխայի հաջողությունները և ի հայտ եկած բարդությունները, որը հնարավորություն է տալիս ստեղծել արդյունավետ անհատական և խմբային ծրագրեր:

Այս ծրագիրը հնարավորություն է ընձեռում բոլոր երեխաներին զարգացնել մարդկային այնպիսի որակներ, ինչպիսիք են հանդուրժողականությունը, դիմացինին օգնելու, ապրումակցելու, հանուն ընդհանուր նպատակների աշխատելու կարողությունը, և որը հնրավորություն է տալիս ներգրավել բոլորին ընդհանուր կրթական պրոցեսի մեջ :

Այսպիսով, աուտիզմ ունեցող անձի ամենօրյա ներառումը կրթական համակարգում, կախված է ոչ միայն խնդրի բարդության աստիճանից , այլ նաև ուսուցիչների մասնագիտական հմտություններից (ի դեպ, հատուկ վերապատրաստումն անհրաժեշտ է) վերաբերմունքից, ծնողների և հասարակության մեջ առկա կարծրատիպերից և կրթական կողմերի ներգրավվածության աստիճանից:

Վերը նշված ներառումն ապահովելու նպատակով, 2017 թվականի ապրիլ ամսից մեծ ջանքերով և մեր կողքին մշտապես կանգնած աջակիցների և հովանավորների ինչպես նաև ծնողների շնորհիվ հնարավոր դարձավ Մորգենթաուի անվան թիվ 126 Հիմնական դպրոցում **«ռեսուրսային դասասենյակ»** ստեղծելը , ինչի շնորհիվ տվյալ դպրոցում ուսանող աուտիզմ ունեցող երեխաների հետ տարվող աշխատանքներն ավելի նպատակային դարձան:

Ռեսուրսային դասասենյակ-ն իրենից ներկայացնում է հատուկ կահավորված լսարան՝ ելնելով դպրոցում ներառված զարգացման առանձնահատկություններ ունեցող երեխաների կարիքներից: Նման լսարանում իրականացվում է ինչպես խմբային, այնպես էլ անհատական շտկողական աշխատանք: Ելնելով զարգացման առանձնահատկություններից աուտիզմ ունեցող երեխաները շատ հաճախ ունենում են վարքային խնդիրներ, խանգարում են համադասարանցիներին, ունենում են գերզգայունություն ձայնային ազդակների նկատմամբ, ֆիզիկապես չեն կարողանում 1 դասաժամ ներկա լինել առանց խոսելու ու շարժվելու, ուստի հարկավոր է մի սենյակ, որտեղ իրենք աստիճանաբար մասնագետների օգնությամբ ձեռք կբերեն բոլոր վերը նշված հմտությունները և կմիանան համադասարանցիներին ընդհանուր դասասենյակում: Ծրագրի նպատակն է ի վերջո նվազեցնել յուրաքանչյուր երեխայի ռեսուրսային դասասենյակում գտնվելու ժամանակը՝ տեղափոխելով ուսումնական գործընթացը հիմնական դասասենյակ: Տվյալ դասարանները համարվում են միջանցիկ հարթակ, որոնց նպատակն է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին ներգրավել և մասնակից դարձնել կրթական ընդհանուր պրոցեսին:

ՆՈՐՀԱՎԱ
natunehureh.am

+9

+9

ΕΛΛΑΣ